ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2007 թվականի փետրվարի 21-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 21.5. Գործերի վերաբաշխման կարգը

1. Եթե դատավորը գործուղվել է, կամ նրա գործուղման ժամկետն ավարտվել է, կամ եթե նա տեղափոխվել է այլ դատարան կամ տվյալ գործով հայտնել է ինքնաբացարկ կամ նախկինում մասնակցել է տվյալ գործի քննությանը, կամ նրա լիազորությունները կասեցվել, դադարել կամ դադարեցվել են, ապա տվյալ դատավորին հանձնված գործերը համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրությամբ հնարավորինս հավասարաչափ վերաբաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող այլ դատավորների միջև:

2. Դատավորի ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բացակայելու դեպքում նրան հանձնված գործերի, ինչպես նաև դատարանում դատավորների թվի ավելացման դեպքում դատարանի վարույթում գտնվող գործերի վերաբաշխման կարգը սահմանում է Դատարանների նախագահների խորհուրդը:

Հոդված 37. Վարչական դատարանի թվակազմը և նստավայրերը

1. Վարչական դատարանը գործում է դատարանի նախագահի և ~~26~~ 23 դատավորի կազմով:

2. Վարչական դատարանի կենտրոնական նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

3. Վարչական դատարանն ունի այլ նստավայրեր մարզերում:

Հոդված 41. Վերաքննիչ դատարանները, դատավորների թվակազմը և նստավայրը

1. Հայաստանի Հանրապետությունում գործում է երեք վերաքննիչ դատարան՝

1) վերաքննիչ քաղաքացիական դատարանը.

2) վերաքննիչ քրեական դատարանը.

3) վարչական վերաքննիչ դատարանը:

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով:

3. Վերաքննիչ քրեական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով:

3.1. Վարչական վերաքննիչ դատարանը գործում է դատարանի նախագահի և ~~6~~ 9 դատավորի կազմով:

4. Վերաքննիչ դատարանի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում: